V ԴԱՐԻ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՍԼԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Պատմ. գիտ. դոկտոր Լ. Հ. ԲԱԲԱՅԱՆ

V դարի հայ մշակույթի ականավոր ներկայացուցիչները, հենվելով ժողովրդական բանահյուսության վրա և յուրացնելով հունա-հռոմեական անտիկ պատմափիլիսոփայության լավագույն ավանդույթները, ստեղծել են ինքնատիպ երկեր, որոնք և նշանավորել են վաղ ֆեոդալիզմի դարաշրջանում հայ գիտապատմական և փիլիսոփայական մտքի զարգացման նոր փուլը։ Ժամանակի հայ մտավոր կյանքի առաջադեմ գործիչներն իրենց երկերում, որոնք ունեն գիտական խոշոր արժեք, հետապնդել են նաև հասարակական-քաղաքական նպատակներ՝ բարձրացնել ժողովրդի ազգային ինքնագիտակցությունը, ազատատենչ ոգին ու դիմադրողական ուժը։ Նրանք ցանկացել են անկախության և պետականության պահպանման համար դարեր շարունակ ժողովրդի մղած հերոսական մաքառումների օրինակով ժամանակակիցներին ու հետագա սերունդներին դաստիարակել հայրենասիրության գաղափարներով, որի համար վառ գույներով ներկայացրել են հայրենիքի հերոսական անցյալը, ժողովրդի տոկունությունն ու խիզախությունը, հայրենիքի ու դավանանքի նկատմամբ ունեցած նրա նվիրվածությունը։

V դարի գրականությունը սերունդներին է թողել քաղաքական և պատմափիլիսոփայական-քննադատական հիասքանչ երկեր հանձին Եղիշեի, Փավստոս Բուզանդի, Մովսես Խորենացու, Ղազար Փարպեցու, Եզնիկ Կողբացու և այլոց գործերի։

Հայ առաջին պատմագիրների վեհ նպատակամղումները, որոնք արդյունք էին Հայաստանում ստեղծված պատմական կոնկրետ իրադրության, պայմանավորել են նաև հայ պատմագրության աշխարհիկ-քաղաքական բնույթը։ Բուն մաքառումների այդ դարաշրջանում հայ հասարակական մտքի քաղաքական նպատակասլացությունը չէր կարող ետին պլանի վրա դնել աշխարհիկ պատմագրությունը։ Հայ պատմական ինքնուրույն ստեղծագործությունները հիմնականում աշխարհիկ բնույթ ունեն և նրանցից յուրաքանչյուրը որոշակի նկատառումներով է գրված։

Քաղաքական նպատակներ են հետապնդել ոչ միայն աշխարհիկ-քաղաքական բնույթի երկերը, այլև աստվածաբանական թարգմանչական դրականությունը, որը V դարում մեծ մասշտաբներ էր ընդունել։ Այն ձգտել է որքան հնարավոր է կարճ ժամանակում ժողովրդի մեջ արմատավորել ու խորացնել քրիստոնեական գաղափարախոսությունը, որն այդ ժամանակաշրջանում նպաստում էր ժողովրդի ինքնագիտակցության բարձրացմանը, արգելակում կրադաշտական կրոնի բռնի տարածման ու հայերի ձուլման ընթացքը։ Այդ նպատակներն են հետապնդել նաև կրոնափիլիսոփայական բնույթի ստեղծագործությունները, առաջին հերթին՝ Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» հայտնի աշխատությունը։

Հայ, ինչպես և մյուս ժողովուրդների շատ պատմագիրներ, մտահոգված հայրենիքի ճակատագրով, պատմությունը համարել են քաղաքական ու հոգևոր պայքարի հզոր զենքերից մեկը, բարձր են գնահատել նրա դերն ու նշանակությունը իրենց գաղափարների տարածման ու արմատավորման գործում։

IV դարի վերջին—V դարի սկզբին պետականությունը կորցնելուց հետո, ինչպես հայտնի է, Հայաստանն ընկել էր Պարսկաստանի և Բյուզանդիայի տիրապետության տակ, որոնք ամեն ջանք գործադրում էին թուլացնելու և իսպառ վերացնելու հայ ժողովրդի ազատատենչ ձգտումները, նրա դիմադրողական պոտենցիալ ուժը, վարում էին հայերին ձուլելու քաղաքականություն։ Պարսկաստանն աշխատում էր այդ իրականացնել հայերին կրոնափոխ անելու միջոցով, Բյուզանդիան՝ ներքին ինքնուրույնությունը, հայկական ավանդույթներն ու սովորույթները վերացնելու, բնակչության բռնի տեղահանումների, նոր էթնիկական տարրերով Արևմտյան Հայաստանը բնակեցնելու միջոցով։

Ստեղծված պայմաններում անհրաժեշտ էր ցույց տալ հայ ժողովրդի հերոսական մաքառումները իր անկախության համար։ Պետք էր քարոզել հայ պետականության վերականգնման անհրաժեշտությունը և օտար տիրապետության անհանդուրժելիությունը։ Ժամանակակիցներին ու հետագա սերունդներին պատմության դասերով դաստիարակելու անհրաժեշտության գիտակցումը պահանջ էր առաջադրել ցույց տալ, որ անցյալում հայրենիքի անկախությունն ու ազատությունը շատ ու շատ անգամ են վտանգվել, սակայն միշտ էլ, շնորհիվ ժողովրդի հայրենասիրության, հայրենիքը ոչ միայն կարողացել է դիմակայել, այլև հաղթել է թշնամիներին։ Անհրաժեշտ էր ժողովրդի մեջ ատելություն սերմանել հայրենիքի ու դավանանքի դավաճանների նկատմամբ, կոչ անել միշտ պատրաստ լինել պաշտպանելու հայրենիքը։

Մեր պատմագիրներն իրենց երկերում ընդգծված ձևով նշել են պատմությունից վերցված դասերի դերը մարդկանց դաստիարակության գործում։ Նրանք գիտակցել են, որ պատմության հայրենասիրական նշանակությունը անցյալում հայրենիքի ազատության ու անկախության համար մղված պայքարի վերհանման մեջ է, ձգտել են ցույց տալ պատմության ուսումնասիրության օգուտը։

Կորյուն վարդապետը, իր «Վարք Մաշտոցի» երկում, որպեսզի հիմնավորի Մաշտոցի կենսագրությունը գրելու անհրաժեշտությունը, Աստվածաշնչից մեջբերումներ է արել և նշել, որ այն պետք է գրվի ուրիշներին իբրև օրինակ ծառայելու համար. «Օրինակ և կանոն ծառայի հետո եկողներին, որպեսզի ամենքը նախանձավոր լինեն նման բարի գործերին»[1]։

Ագաթանգեղոսը նույնպես կոչ է արել բարի գործել, հետևել բարի գործերին, հաղթահարել դժվարությունները, կյանքը չխնայել հայրենիքի համար։ Բարի գործը՝ պայքարն էր հանուն ազատության և ինքնուրույնության։ Իսկ դրա համար անհրաժեշտ էր մարդուն հանել պասիվ վիճակից, նրան ակտիվ, գիտակցված գործունեության կոչել, բարձրացնել նրա դերը իր իսկ արժանապատվությունը պաշտպանելու գործում։

Ագաթանգեղոսը հասկացնել է տալիս, որ եթե դավանանքի ուրացումը (անկախ կրոնի բնույթից) անցյալում հայերին զրկել է հզոր պետականությունից, ապա այժմ էլ կզրկի ինքնուրույնությունից։ Դիմելով հասարակության

[1] Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1941, էջ 54, 33։

բոլոր խավերին՝ նա զգուշացրել է ուրացության կործանարար հետևանքների մասին։

Ելնելով հայրենիքում տիրող իրավիճակից՝ հայրենասեր Փավստոս Բուզանդն անհրաժեշտ է համարել ցույց տալ Հայաստանի երբեմնի հզորությունը, անպարտելիությունը, հայրենիքի անկախության ու ազատության համար հայ ժողովրդի հերոսական մաքառումները և, որ կարևորն է, ցույց տալ ժողովրդի հայրենասիրությունը և միաժամանակ քարոզել այն գաղափարը, որ այդ բոլորն արդյունք էր ժողովրդի աստվածապաշտության, և ընդհակառակը, անհաջողությունները, պարտությունները, ավերումները, պետականության կորուստը՝ եկեղեցու նկատմամբ ցուցաբերած անհավատարմության և ուխտադրժության։ Հայերի հաղթանակների հիմնական գործոնը միասնությունն ու նվիրվածությունն է եղել և այդ անպարտելի է դարձրել նրանց, թշնամիների բյուրավոր բանակներ ոչնչացել են, մարտի դաշտից պարսից արքայից արքան կամ դավաճան Մերուժան Արծրունին փախուստի են դիմել, որովհետև հայերը «միաբան, միասիրտ, հոժարակամ գնացել են պատերազմի և իրենց կյանքը զոհել իրենց կանանց ու որդիների, իրենց հայրենիքի ու դավանանքի համար»[2]։ Նա ընդգծված ձևով շեշտել է, որ հայրենիքի համար զոհվածները քաջ գիտակցել են պայքարի անհրաժեշտությունը և իրենց կյանքը չեն խնայել ու մինչև վերջին շունչը հերոսաբար կռվել են թշնամիների դեմ։ Նրանք, քանի կենդանի էին, արդար աշխատանքով աշխատեցին,— ասում է պատմագիրը,— դրա համար էլ մեռնելիս հաստատ պահեցին իրենց հավատարմությունը և իրենց անձը զոհեցին ժողովրդի համար. նրանք, որ իրենց կյանքը չխնայեցին, պետք է սրբացվեն։

Ջերմ հայրենասիրությամբ տոգորված պատմագիրը, խորապես գիտակցելով հայրենիքի, հայրենի հողի կենարար ուժը, հող, որ մարդուն արիություն և անպարտելիություն է ներշնչում, արժանապատվության զգացումով լցնում, անհրաժեշտ է համարել գրել այդ մասին, հասկացնել, թե ինչու պետք է պաշտպանել հայրենիքը, հայրենի հողը։ Խոսելով հայոց Արշակ թագավորի ողբերգական մահվան և Հայաստանից տարված հողի մասին, Բուզանդը նպատակ է ունեցել ցույց տալ, որ մայր հողի վրա Արշակը արհամարհել է մահը։

Մամիկոնյանների հերոսացումը Փավստոսի կողմից պատահական չէ։ Երկը գրվել է Արշակունիների անկումից մի քանի տասնամյակ հետո, այն ժամանակ, երբ հայ ժողովրդի ինքնուրույնության պահպանման համար ազատագրական պայքարի դրոշակակիրները եղել են Մամիկոնյանները։ Անհրաժեշտ էր նախարարներին և ամբողջ ժողովրդին համախմբել նրանց շուրջը, շեշտել, որ անցյալում էլ հայ կյանքում գլխավոր գործիչները նրանք են եղել, և եթե նրանք չլինեին, Հայաստանը շատ վաղուց կորցրած կլիներ իր անկախությունը, հայ եկեղեցին վաղուց կործանված կլիներ, Արշակունիներն այդքան երկար չէին իշխի։ Բերելով սպարապետ Վասակ Մամիկոնյանի պատասխանը Շապուհին, Բուզանդը նպատակ է ունեցել ցույց տալ հայերի կողմնորոշման վճռական նշանակությունը Բյուզանդիայի և Պարսկաստանի համար (էջ 218)։

Փավստոսը հպարտությամբ և գոհունակությամբ է նկարագրել Մամիկոնյան դյուցազների (Վաչե, Վասակ, Մուշեղ, Մանվել) գործունեությունը, մղած պատերազմները, որոնք ավարտվել են հայերի փայլուն հաղթանակներով։

---

2 Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Երևան, 1947, էջ 126—127։

Պատմահայր Մովսես Խորենացին, որ լավ գիտեր պատմության դերն ու նշանակությունը և այն գրելը համարում էր «գեղեցիկ խնդիր», «գեղեցիկ մըտածողություն», առաջինն է խիզախել տալու հայ ժողովրդի սիստեմատիկ պատմությունը։ Ըստ Խորենացու, հայոց պատմությունը պետք է գրվեր հատկապես այն նկատառումով, որ «թէպէտ և եմք ածու փոքր, և թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ, և զորութեամբ տկար և ընդ այլով յոլով անգամ նուաճեալ թագաւորութեամբ, սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ և ի մերում աշխարհիս, և արժանի գրոց յիշատակի...»[3]։ Նա հանդիմանել ու մեղադրել է անցյալի հայ թագավորներին և անգամ ժամանակակիցներին, որոնք չեն հոգացել իրենց ժողովրդի պատմությունը գրելու մասին։ Այդ նա «անիմաստասեր» բարք է համարել։ Ըստ Խորենացու, գովասանքի են արժանի այն թագավորներն ու նախարարները, որոնք գրել են տվել իրենց ժամանակների պատմությունը։ Գիտնական պատմագիրը ընդգծել է, որ մատենագիրների շարադրած դրվածքները կարդալիս «ըստ աշխարհօրէն կարգաց իմաստնանալ ասեմք, և քաղաքականս ուսանել կարդս» (էջ 11—12)։

V դարում պատմության նպատակների ու նշանակության մասին նման հայացքը նոր երևույթ էր, տիրող ավանդական եկեղեցական մտայնությունից շատ հեռու գնացող ըմբռնում։

Մեր պատմական գրականության մեջ Խորենացին առաջինն է մտցրել ժամանակագրության հասկացողությունը և դրանով իսկ պատմությունը դրել գիտական հիմքերի վրա։ «Ոչ է պատմութիւնն ճշմարիտ, առանց ժամանակագրութեան»,—գրել է Խորենացին (էջ 223)։

Խորենացու ապրած ժամանակաշրջանում խիստ անհրաժեշտություն էր դարձել ցույց տալ, որ հայերը հենց սկզբից աղատատենչ են եղել, փոքրաթիվ ուժերով միշտ պայքարել են բռնության ամեն մի փորձի դեմ ու հաղթանակել։ Այդ անելու համար պատմահայրը Հայկին դուրս է բերել բռնակալ Բելի դեմ։ Բելի բոլոր փորձերը բանակցությունների միջոցով ապստամբ Հայկին իրեն ենթարկելու՝ ապարդյուն են անցել։ Հայերի անկախության հարցը պատերազմը պետք է լուծեր։ Այնուհետև անհրաժեշտ էր շեշտել, որ ճակատամարտերում Հայկը դյուցազն է եղել, իսկ թշնամին՝ երկչոտ, չնայած մինչև ատամները զինված։ Սաստիկ կռիվ է տեղի ունեցել, Հայկը հարձակվել է Բելի վրա, գետին կործանել. տեսնելով Հայկի քաջությունը՝ Տիտանյան արքայի զորքը դիմել է փախուստի (էջ 40)։

Ոչ պակաս դյուցազն է Խորենացու Արամը, որի մասին պատմել են, թե շատ գործեր է կատարել հաղթական պատերազմներում և ընդարձակել է Հայաստանի սահմանները բոլոր կողմերից, և նրա անունով էլ ազգերը կոչում են նրա երկիրը։ Արամը լավ է համարել հայրենիքի համար մեռնել, քան տեսնել, թե ինչպես օտարացեղ ազգերը ոտնակոխ են արել իր հայրենիքի սահմանները, և օտարները տիրել են իր արյունակից հարազատներին (էջ 46—47)։

Արա Գեղեցիկը գերադասել է մահվան գնով պահպանել իր հայրենիքի անկախությունն ու ազատությունը, քան տիրանալ վավաշոտ Շամիրամի խոստացած փառքին՝ դառնալ Ասորեստանի թագավոր (էջ 53)։

Վկայակոչելով հույն պատմագիրներ Փղեգոնիոսին և Պոլիկրատեսին, Պատմահայրը հպարտությամբ նշում է, թե առաջինը գրել է. «Պարթև Արտա-

3 «Մովսէսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1913, էջ 12։

շեսը բոլոր թագավորներից հուժկու է եղել», իսկ երկրորդը գրել է, թե իր աչքում Պարթև Արտաշէսը բարձր է Ալեքսանդր Մակեդոնացուց (էջ 119, 117)։

Խորենացու այս Արտաշէսը իրականում Տիգրան Մեծն է։ Ժամանակները պահանջում էին ցույց տալ, որ հայերն ու պարսիկները հնում մտերիմ են եղել, միաբանել են միմյանց հետ, որ Կյուրոսի և Տիգրանի միաբանությունն է անհանգստացրել մարաց Աժդահակ թագավորին, որին հետո ճակատամարտում քաջաբար սպանել է Տիգրանը, որ հայ Արշակունիների թագավորությունը ստեղծել են պարթևները՝ ելնելով իրենց իսկ պետության շահերից, որ Հայաստանի սահմանները որոշել էր ոչ այլ ոք, քան «Արշակ Մեծ Պարթև արքան»։ Ավելին, նա Վաղարշակին (իրականում Տրդատ I-ին—Լ. Բ.) ասել է. «...և որչափ միտք քո և քաջութիւն հատանեն. զի սահմանք քաջաց, ասէ զէնն իւրեանց, որքան հատանէ, այնքան ունի»։ Նա Վաղարշակին էր տվել «զկնս թագաւորութեան իւրոյ» (էջ 31, 33)։

Խորենացու ապրած դարաշրջանում պետք էր փառաբանել հայրենիքի անցյալը, ցույց տալ, որ հայերը պարթևներից շատ առաջ թագավորություն են ունեցել։ Վկայակոչելով Երեմիա մարգարեին, որն իր մարգարեության մեջ գրել է, թե «հրավիրելով ընդդեմ Բաբելոնի ի պատերազմ, հրաման տուր, ասէ, Այրարատեան թագաւորութեանն և Ասքանազեան գնդին» Պատմահայրը ավելացնում է՝ «եւ այս հաւաստի զոյոյ մերոյ թագաւորութեանն առ այնու ժամանակաւ» (էջ 70)։

Նա հպարտությամբ հայերին մասնակից է դարձրել անգամ Իլիական պատերազմին. և մեր Զարմայրը, որ ասորեստանցիներին հպատակ էր, քիչ մարդով եթովպական զորքերի հետ օգնական է եղել Պրիամոսին և այնտեղ հելլենացոց քաջերից վիրավորվելով՝ մեռել է, «բայց կկամենայի թե Աքիլեսից և ոչ թե մի ուրիշ քաջից մեռներ»,— բացականչում է Խորենացին (էջ 89)։

V դարում հայերի դավանանքին սպառնացող վտանգը անհրաժեշտ էր դարձրել, որ Խորենացին գրեր նաև, թե հայերը քրիստոնյա առաջին ժողովուրդներից են, որ նրանց նախնիները հենց սկզբից ոչ միայն կամովին ընդունել են նոր դավանանքը, նպաստել նրա տարածմանը, այլև պատրաստ են եղել վրեժխնդիր լինել Քրիստոսին խաչող հրեաներից։ Այդ նպատակով Խորենացին Եդեսիայի Աբգար արքային ներկայացրել է իբրև հայոց թագավոր ու ժամանակակից դարձրել Քրիստոսին (էջ 137)։

Պատմահոր հիմնական նպատակն է եղել պատմության միջոցով ցույց տալ, որ եղել են ժամանակներ, երբ հայ դյուցազները արշավել են հզոր թշնամիների դեմ և հաղթանակել։ Ահա հայի անցյալը, այդպես պետք է լինի նաև ներկան ու ապագան, քանի որ հայերը քաջերի սերունդներից են, իսկ քաջերի սերունդները պետք է քաջ լինեն։

Մինչդեռ,— դառնությամբ գրել է պատմագիրը,— իրենց տիրել են խըստասիրտ ու չար թագավորներ, որոնք ծանր բեռներ են բարձում, անտանելի հրամաններ են տալիս։ Կառավարիչները կարգ չեն պաշտպանում, անողորմ են, սիրելիները դավաճանված են, թշնամիները զորացած, հավատը ծախվում է։ Ասպատակությունները համատարած են, ստացվածքները հափշտակվում են, հայտնի անձեր բանտարկվում են, դեպի օտարություն են աքսորվում աղսըվականները, անթիվ նեղություններ են կրում ռամիկները, առնվում են քաղաքներ, քանդվում են ամրոցներ, ավերվում են ավաններ, հրդեհվում են շինություններ, անվերջ սով է, հիվանդություններ և բազմատեսակ համաճա-

րակներ։ Աստվածապաշտությունը մոռացված է (էջ 376)։ Պատմահայրը ստեղծված ողբալի վիճակի պատճառը համարել է պետականության ու անկախության կորուստը, որը հետևանք էր անմիաբանության, դավաճանության և ուրացության։ Իր «Ողբում», որը հայրենասիրության փայլուն արտացոլումն է, Խորենացին գրել է. ողբում եմ քեզ Հայոց աշխարհ, որովհետև վերացան թագավորդ ու քահանադ, խորհրդականդ ու ուսուցանողդ, վրդովվեց խաղաղությունը, արմատացավ անկարգությունը, խախտվեց ուղղափառությունը (էջ 369)։

Աժդահակի՝ Տիգրանին հղած թղթում Խորենացին ընդգծել է միասնության ուժն ու նշանակությունը։ Աժդահակը Տիգրանին գրում է, որ այս աշխարհում աստվածներն իրենց չեն պարգևել ավելի օգտակար բան, քան սիրելիների բազմությունն, իհարկե, իմաստուն և հզորագույնների, որովհետև այդ դեպքում դրսից խռովություններ չեն ծագի, և եթե պատահեն, իսկույն կընկրճվեն, իսկ ներսում նրանք կհալածվեն և ինքը, տեսնելով բարեկամությունից առաջ եկող այդ օգուտը, ցանկանում է ավելի հաստատուն դարձնել ու խորացնել իրենց մեջ եղած սերը, որպեսզի երկուսն էլ բոլոր կողմերից ապահովվելով ամբողջ և հաստատ պահեն իրենց տերությունները (էջ 80)։

Մեծ հայրենասերը իր մարտական գրչով կռիվ է հայտարարել Հայաստանի արտաքին ու ներքին թշնամիների դեմ։ Սխալված չենք լինի, եթե ասենք, որ Խորենացու «Պատմությունը» հոգևոր զենք է հանդիսացել ժողովրդի համար։

Պատմության դերի ու նշանակության խոր գիտակցությամբ է կյանքի կոչվել նաև Եղիշեի «Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին» երկը։ Ի տարբերություն Խորենացու, որի նպատակն էր անցյալի պատմությունը օրինակ ծառայեցնել ժամանակակիցներին ու գալիք սերունդներին և դրանով հոգևոր զենք տալ նրանց, Եղիշեն այդ նույն նպատակն է հետապնդել, սակայն ոչ թե անցյալին դիմելով, այլ իր ապրած հերոսական օրերի պատմությունը գրելով։ Ամբողջ երկը, որ նվիրված է V դարի 40—50-ական թթ. հայրենիքի ինքնուրույնության պահպանման ու դավանանքի պաշտպանության համար հայ ժողովրդի մղած պայքարին, սրդեն իսկ դաստիարակչական է։

Գրելով իր երկը, Եղիշեն ցանկացել է, որպեսզի ինչպես ինքն է ասել, շարունակ կարդան, իմանան առաքինի անձերի քաջությունը և «ոչ առաքինիների վատթարությունը»։ Նա կոչ է արել, թե միաբանությունը բարի գործերի մայրն է, իսկ անմիաբանությունը՝ չար գործերի ծնողը։ Իր երկը սիրելիների համար պետք է մխիթարություն լինի, հուսացողներին՝ հույս, քաջերին՝ քաջալերություն[4]։ Եղիշեն անհրաժեշտ է համարել ներշնչել ժողովրդին ազատության, խիզախության, քաջության ոգին, տոգորել հերոսությամբ և ընդհակառակը, ատելի դարձնել դավաճանությունը, բռնությունը, ուխտադրժությունը։

Ըստ Եղիշեի, պետք էր ոչ միայն ողբալ ստեղծված թշվառ վիճակը, այլև ցույց տալ դրա պատճառները, եզրակացություններ անել ներկայի ու ապագայի համար, միաժամանակ հիանալ ու հիացնել, հափշտակվել ու հափշտակեցնել այդ թշվառ վիճակի դեմ պայքարող հերոս նահատակների սխրագործություններով։ Եղիշեն գիտակցված կյանքի է կոչել մարդկանց։ Սերունդները հպարտությամբ ու հիացմունքով են կարդացել հայրենասերի այն հատվածը, ուր գրում է, թե «Մահ ոչ իմացեալ՝ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն է։ Որ

4 «Եղիշէի Պատմութիւն Վարդանանց», Տփխիս, 1879, էջ 2—3։

զմահ ոչ գիտէ՝ երկնչի ի մահուանէ, իսկ որ գիտէ զմահ՝ ոչ երկնչի ի նմանէ։

Եւ այս ամենայն չարիք մտանեն ի միտս մարդոյ յանուսումնութենէ։ Կոյր զրկի ի ճառագայթից արեգական, և տգիտութիւն զրկի ի կատարեալ կենաց։ Լաւ է կոյր աչօք քան կոյր մտօք։ Որպես մեծ է հոգի քան զմարմին՝ այսպէս մեծ է տեսաւորութիւն մտաց քան զմարմնոց» (էջ 17—18)։

Եղիշեն գիտակցել է, որ Պարսկաստանից եկող վտանգի դեմ պետք է բոլոր ճակատներով մահու և կենաց կռիվ մղել, իսկ դրա համար անհրաժեշտ է մարդկանց նախապատրաստել, ցույց տալ, համոզել, որ ուժեղ թշնամու դեմ անհավասար մարտը պահանջում է բարձր գիտակցականություն, խիղախություն և տոկունություն։ Նա գրել է, թե հայրենիքին սպառնացող վտանգի օրերին, հայ հասարակության բոլոր խավերը միաբանեցին, մեկ մարդու պես ծառացան թշնամու դեմ։ Ի դեպ, Եղիշեի հերոսն ամբողջ ժողովուրդն է, նրան է վերագրում հաղթանակները, մեծ տեղ է տալիս ռամիկներին ու շինականներին և հատկապես կանանց։ Անհրաժեշտ էր ցույց տալ, որ հայրենիքի և դավանանքի պաշտպանությունը համաժողովրդական գործ է և նրանց նկատմամբ նվիրվածությունը այնքան հզոր է, որ ժողովուրդը տարերայնորեն է ոտքի ելել պայքարի համար։

Եղիշեն շեշտում է, որ ամբողջ բազմությունը, մեծերից մինչև փոքրերը, միաբանեցին, երդվեցին կյանքով ու մահով հաստատ մնալ իրենց որոշման մեջ (էջ 91)։

Նախարարները կանչվել են Տիզբոն, ուր հարկադրանքի տակ առերես կատարել են Հազկերտ արքայի պահանջն ու մեծ թվով մոգերի հետ վերադարձել։ Եղիշեն անհրաժեշտ է համարել ժամանակակիցներին և հետագա սերունդներին ցույց տալ, որ Հայաստանը քրիստոնյա մյուս ժողովուրդների համար ապաստանի ապահով երկիր է եղել, միաժամանակ նրանց պարծանքը։ Նա գրում է. Տիզբոնում քրիստոնյա ժողովուրդների ներկայացուցիչները, չիմանալով հայ նախարարների գաղտնի որոշումը առերես կրոնափոխ լինելու մասին, նրանց շատ խիստ հանդիմանել են, ասելով՝ դուք էիք մեր ապաստանի ամուր պարիսպը, երբ այստեղից վտանգ էր սպառնում, ձեզ մոտ էինք ապահովություն գտնում, այժմ այդ մեծ ամրությունը հիմնահատակ տապալվեց։ Դուք էիք մեր պարծանքը ճշմարտության թշնամիների առաջ, այժմ դուք դարձաք մեր նախատինքը նույն թշնամիների մոտ։ Մինչև այժմ ձեր ճշմարիտ հավատի համար մեզ էլ փոքրիշատե խնայում էին, իսկ այժմ ձեր պատճառով մեզ էլ են անողորմ դատում (էջ 77—79)։

Երբ Հայաստանում լսում են նախարարների վերադարձի մասին լուրը, մեծ բազմություն է հավաքվում Անգղ գյուղաքաղաքում , ուր պետք է ժամանեին նախարարներն ու մոգերը։ Պատմագիրն ասում է, թե Հայոց աշխարհի բոլոր կողմերից այնտեղ էին գնում տղամարդկանց ու կանանց մեծ խմբեր։ Հավաքվածները որոշել էին՝ հարազատ եղբոր ձեռքը թող բարձրանա այն մերձավորի դեմ, որ դուրս է եկել աստծու պատվիրանի ուխտից, հայրը չխնայի որդուն, որդին չակնածի հոր պատվից։ Կինը կռվի իր ամուսնու դեմ և ծառան դիմադրի իր տիրոջը։ Նրանք որոշել էին դավանանքի համար մեռնել քան թե ապրել։ Ապա բոլորն էլ զինվել են, հարձակվել մոգերի վրա ու դուրս քշել երկրից (էջ 80—81)։ Սկսվել է համաժողովրդական մեծ ապստամբությունը։ Պարսկական արքունիքը մեծ բանակ է ուղարկել Հայաստան, սակայն չի կարողացել ճնշել ապստամբությունը։ Ավարայրի ճակատամարտում հայերը հե-

բոսաբար կռվել են թշնամու դեմ, բայց ապստամբության ղեկավարի՝ սպարապետ Վարդան Մամիկոնյանի և մի քանի ուրիշ նախարարների զոհվելուց հետո նահանջել են, իսկ պարսիկները երկյուղից նրանց չեն հետապնդել։ Ըստ Եղիշեի՝ ճակատամարտում «ոչ եթէ կողմ էր որ յաղթեաց, և կողմ էր, որ պարտեցաւ, այլ քաջք ընդ քաջս ելեալ՝ երկոքին կողմանքն ի պարտութիւն մատնեցան» (էջ 177)։

Եղիշեն ցույց է տվել, որ հայերի ժողովրդազատագրական ապստամբությունը իրականում հաղթանակով է պսակվել։ Պատմագիրն այդ հաղթանակի արդյունքները հրճվանքով ու գոհունակությամբ է արձանագրել։ Դավանանքին սպառնացող վտանգը ժամանակավորապես վերացվել է, հարկերը ներվել են։ Ըստ Եղիշեի, ամենամեծ նվաճումն այն է եղել, որ բռնությամբ կրոնափոխ եղածները իրավունք են ստացել նորից դավանելու իրենց կրոնը։

Անհրաժեշտ էր ցույց տալ, թե որն էր Հազկերտի քաղաքականության այսպիսի արմատական փոփոխության պատճառը։ Հայրենասեր Եղիշեն այդ արել է թշնամու բերանով՝ ավելի ազդու դարձնելու նպատակով։ Հազկերտի պաշտոնյաներից մեկը, որը պետք է Հայաստանում գլխավորեր կրոնափոխությունը, իբր թե ասել է. եթե աստվածներն էլ մեզ օգնության գան, հնարավոր չէ, որ այս երկրում հաստատություն գտնի զրադաշտական կրոնը։ Եթե այս աշխարհի զորքն էլ մոգեր լինեին, քրիստոնյաները ամենևին չէին խնայի նրանց էլ և կոչնչացնեին ոչ միայն դրսից եկածներին, այլև իրենց եղբայրներին, որդիներին և բոլոր մերձավորներին։ Մարդիկ, որոնք ո՛չ շղթաներից են վախենում, ո՛չ տանջանքներից երկյուղ կրում, ո՛չ հարստությունը բանի տեղ դնում և, վերջապես, որ բոլոր չարիքներից ամենից վատթարն է, մահը գերադասում են կյանքից, ո՞վ է, որ կարող է նրանց դիմադրել (էջ 83—84)։

Եղիշեն հասկացել է, որ հայերի կրոնափոխությունն անիրագործելի է և իզուր կլինեն նաև նոր փորձերը։ Պատմագրի ապրած օրերի պահանջն էր դավանանքի հետ կապված հարցերը նման ձևով ներկայացնելը և Եղիշեն պատվով է իրականացրել այդ պահանջն ու հասել է իր նպատակին։

Ղազար Փարպեցին ստեղծել է պատմական մի երկ, որպեսզի հոգևորականության բարի վարքի մասին կարդալով՝ ժողովուրդը ցանկանա նմանվել նրան, որպեսզի քաջերը, լսելով նախնիների քաջագործությունների մասին, կրկնապատկեն իրենց ուժը, քաջությունը, անվանի հիշատակներ թողնեն իրենց անձերի ու ազգի համար, իսկ ծույլերը և վատերը նայելով իրենց վրա և լսելով ուրիշների պարսավանքները՝ բարի նախանձով կրթվելով ջանան լավանալ։

Փարպեցին գրում է, թե Տիզբոնում առերես կրոնափոխ լինելուց հետո, Վարդանը Հազկերտին հիշեցրել է իր հավատարիմ ծառայությունը պարսից արքունիքին և կարծեք նրան ահաբեկելու նպատակով ասել է, որ ինքը կաշխատի այնպիսի գործ կատարել, որ ոչ միայն պարսիկների, այլև կայսեր դռանը և ուրիշ ազգերի մեջ պատմվի նրա համբավը մինչև հավիտյան։ Այդ գործը Ավարայրն էր, ասում է Փարպեցին (էջ 115)։

Փարպեցին շատ ավելի հանգամանորեն է ներկայացրել 481—484 թթ. Վահան Մամիկոնյանի գլխավորությամբ հայ ժողովրդի ծավալած ազատա-

---

5 «Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան», Թիֆլիս, 1907, էջ 13։

գրական պայքարը։ Այդ պայքարի պատմության միակ հավաստի աղբյուրը նրա երկն է, որի շնորհիվ հետագա սերունդները գաղափար են կազմում այդ դարագլուխ կազմող հերոսամարտի մասին։ Եթե, ըստ Եղիշեի, 450—451 թթ. պայքարն ավարտվել է դավանանքին սպառնացող վտանգի ժամանակավորապես վերացումով, ապա, ըստ Փարպեցու, 481—484 թթ. պայքարն ավարտվել է երկրի ներքին ինքնուրույնության վերականգնումով և 470-ական թթ. սկսած տնտեսական ու կրոնական ուժեղացած հալածանքների դադարեցմամբ։

Պատմագիրը վկայում է, որ ապստամբության նախապատրաստության ժամանակ նախարարները իրենց հույսը չեն դրել բյուզանդացիների և ոչ էլ հոների վրա, այլ ապավինել են միայն իրենց ուժերին։ Նրանք լավ են համարել մեռնել, քան թե ամեն օր եկեղեցիների քանդվելն ու քրիստոնյաների անարգվելը տեսնել, ասում է Փարպեցին (էջ 262—263)։ Նրա ապրած օրերում ուրացությունը, դավաճանությունը, կամայականությունները ու խաբեությունը ջլատում էին հայոց ուժերը, դժվարացնում թշնամուն դիմակայելու գործը, և Փարպեցին անհրաժեշտ է համարել ցույց տալ դրա պատճառները, որպեսզի բոլորն իմանան ու զգուշանան։ Նա Վահան Մամիկոնյանի բերանով պարսից զորավարին ասել է. Հայոց աշխարհը մեծ ու պիտանի է, բայց թող նա ցույց տա իրեն մի մարդ այդ երկրում, որ թագավորի շնորհիվ է զորացել՝ արժանավոր կերպով հասնելով իշխանության. ընդհակառակը, հիմա զորացել են ավազակ, անպիտան, հացկատակ ու ստոր մարդիկ, որոնք պարսից մեծ թագավորությանը խաբում են, ուրանում իրենց կրոնը, փառքի ու իշխանության արժանանում, որից հետո գաղտնի անարգում են նրանց կրակը։ Այնուհետև Վահանը, զայրույթով նշելով Պերոզ արքայի վիրավորական խոսքերը հայերի նկատմամբ, բացականչել է. արդյոք մահը լավ չէ՞ր, քան արքայի այդպիսի խոսքը (էջ 303)։

484 թ., մեծ կորուստներ տալով, պարսից արքունիքը ստիպված հաշտություն է առաջարկել հայ ապստամբներին։ Վահան Մամիկոնյանը ներկայացրել է իրենց պահանջները, որ և պարսից Վաղարշ արքան ընդունել է։ Փարպեցին անհրաժեշտ է համարել ընդգծել, որ իբր հայերի ապստամբությունը արդարացրել են անգամ թշնամիները։ Պարսիկ ավագանին Պերոզին հաջորդած Վաղարշին համոզել է, որ հայերի ապստամբության պատճառը Պերոզն է եղել և Վաղարշը Վահանին ասել է. Պերոզի արհամարհող ու կամակոր բնավորության պատճառով պարսիկներից շատերը մտածել են ապստամբել, բայց չեն կարողացել, որովհետև աշխարհիս կյանքը քաղցր համարելով չեն վտահել այդպես անկերկյուղ իրենց անձերը մահի մատնել՝ ինչպես դուք ինքներդ մատնեցիք։ Բայց դուք այս աշխարհը բոլորովին ոչինչ համարեցիք, մեռնողները քաջի նման մեռան, առավել ևս քաջի նման ապրեցիք կենդանի մնացածներդ։ Ավելին, Վաղարշը ցավով բացականչել է. երանի թե մյուս մարդիկ էլ, որոնց Պերոզը զուր տեղը կորցրեց, կարողանային այնպիսի քաջասրտություն անել, ինչպիսին դուք արեցիք և գուցե այսօր կենդանի լինեին ձեզ նման և մեզ մոտ ներկա (էջ 380—381)։ Վերջում Վաղարշը հայտարարել է, որ այսուհետև պարսից գահի վրա նստող թագավորներից և ընդհանրապես պարսիկներից ոչ մեկը չպետք է համարձակվի մինչև հավիտյան հիշել հայերի ապստամբության մասին (էջ 385)։

Փարպեցու հիմնական նպատակն է եղել ցույց տալ իր ժողովրդի դասական անցքի ուժն ու հզորությունը, անպարտելիությունն ու հաղթանակը, ժողովրդի հայրենասիրությունը, ինքնուրույնության և գոյատևման համար նրա մղած հերոսական մարտերը։

Հայրենասեր պատմագիրը գայրույթով ու ատելությամբ է գրել դավաճաններին և ուրացողների մասին. նրանք սուտ աղտեղությամբ լի, սուտ, անպիտան, չարագործ, գող, գերեզմաններ քանդող, խաբեբա, աստվածանենգ, անօրեն, չարախորհուրդ մարդիկ են։ Նրանց հետ,— ասում է Փարպեցին,— Հայոց աշխարհի շինականն անգամ դարշում է հաց ուտել կամ մոտենալ, մախենալով, թե չլինի պղծվի։

Փարպեցին հասել է իր նպատակին, ցույց է տվել և սերունդներին թողել երկու ճակատագիր և երկու վախճան՝ դավաճան և ուրացող Վասակի անփառունակ դաժան մահը և Վարդանի մարտիրոսաբար անմահանալը։

Փարպեցին Հովհան կաթողիկոսի բերանով հրճվանքով ու հաղթակնոտին բացականչում է. ո՞ւր են առանց աստծու զորոգացածները, ո՞ւր են առանց աստծու իշխանություն ձեռք բերողները, ո՞ւր են եկեղեցին անարգողները, օրենքները ոտնահարողները, սրբությունը պղծողները, մոխրատներ շինողները, ճշմարտությունը մոռացողները, արդարությունը հայհոյողները—փախան, գլուխները կախեցին, ամաչեցին (էջ 398)։

V դարի հայ պատմագիրների փայլուն համաստեղության ներկայացուցիչները, խոր գիտակցելով պատմության դերն ու նշանակությունը, դարերին են թողել պատմական անմահ հուշարձաններ՝ նվիրված անցյալի և իրենց ապրած դարաշրջանի քաղաքական ու հոգևոր կյանքում տեղի ունեցած խոշոր իրադարձություններին, համոզված լինելով, որ իրենց ստեղծած կոթողները կծառայեն այն նպատակներին, որոնք իրենք հետապնդել են։

ПОЛИТИЧЕСКАЯ ЦЕЛЕУСТРЕМЛЕННОСТЬ АРМЯНСКОЙ ИСТОРИОГРАФИИ V ВЕКА

Доктор историч. наук Л. О. БАБАЯН

(Резюме)

В статье кратко излагаются принципы понимания историографами V в. роли и значения истории для воспитания в армянском народе национального достоинства и самосознания, любви и преданности к родине, непримиримости по отношению к чужеземным захватчикам. Показывается, как историографы той эпохи использовали историю в качестве средства преодоления трудностей своего времени, находя в ней большую идейную силу. Суровой действительности противопоставлялось богатое героическими традициями прошлое: оно служило примером современникам и грядущим поколениям.